ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2014 թվականի N 41 -Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ ԵՎ ՊՈՒՐԱԿՆԵՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ, 21-րդ կետերով, 52-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ համայնքային կազմակերպություն):
2. Հաստատել «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Հաստատել համայնքային կազմակերպությանը ամրակցվող գույքի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:
5. Համաձայնություն տալ «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համայնքի ղեկավարի կողմից առաջադրված տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սամվել Գալստյանի թեկնածությանը:
6. Սահմանել, որ՝
   1) համայնքային կազմակերպության գործունեության առարկան ու նպատակն է.
      ա) քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային ենթակայության տակ գտնվող զբոսայգիների, պուրակների և հանգստի գոտիների վերականգնումը, պահպանումը, խնամքը, շահագործումը,
      բ) բնակչության ժամանցի և հանգստի կազմակերպումը,
7. Թույլատրել համայնքային կազմակերպությանը իրականացնել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
   1) ատրակցիոնների տեղադրում և շահագործում,
   2) մասսայական միջոցառումների կազմակերպում:
8. Դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության